ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/18Շ ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 20.11.2018թ կնքված պայմանագրում 20.12.2018թ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Վճարման ժամանակացույցի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքներ

Համաձայնագրի գինը կազմում է 88434414 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: 20.11.2018թ *կնքված թիվ* ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/18Շ *պայմանագրի 8.5 կետ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անի Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010 59-00-38

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

Scanned by CamScanner

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
20.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/18Շ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «20» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վառյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 20.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/18Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Լրացնել պայմանագրում 5.1.1 կետը հետևյալ խմբագրմամբ <<Պայմանագրի գնից՝ մինչև 88 434 414 (ութսունութ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:
Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության	«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	Ք.Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ.6/2
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 01567429
հշ 90001000733	ՀՀ 163007045608
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Scanned by CamScanner